ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

E-mail paraqar.armavir@mta.gov.am

www.parakar.am

Հեռ. 231-6-00-42, 060 530042 1149, գ. Փարաքար, Նաիրի 42

01.07.2014 թ. թիվ 424

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան Աշոտ Սարգսի

ՈՒղարկվում է Փարաքարի գյուղական համայնքի ղեկավարի 2014 թվականի հունիս ամսվա ընթացքում ընդունած որոշումներն ու արձակած կարգադրությունները:

Կից 16 թերթ

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Կատ.՝ Գ.Մանուկյանին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՅԻՍԻ 2014թվականի N 21 -Ա

ԱԼԲԵՐՏ ՍՏԵՓԱՆԻ ՏԵՐ-ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ԼԱՈՒՐԱ ԱՐԱՄԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ, ՆԱՐԻՆԵ ԱԼԲԵՐՏԻ ՏԵՐ-ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԵՎ ԱՐՄԵՆ ԱԼԲԵՐՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 –Ն որոշմամբ, նկատի ունենալով, որ կառույցներն իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, շինությունները և հողամասը չեն գտնվում կամ կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով համասեփականատերեր Ալբերտ Ստեփանի Տեր-Գևորգյանի, Նարինե Ալբերտի Տեր Գևորգյանի և Արմեն Ալբերտի Գևորգյանի 2014 թվականի մայիսի 14-ի դիմումը.
ո ր ո շ ու մ ե մ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի Փարաքար գյուղում Ալբերտ Ստեփանի Տեր-Գևորգյանի /ծնված 08.06.1936թ./, Լաուրա Արամի Սիմոնյանի /ծնված 14.03.1941./, Նարինե ԱլբերտիՏեր-Գևորգյանի /ծնված 08.11.1968թ./ և Արմեն ԱլբերտիԳևորգյանի /ծնված 27.07.1973թ./ գույքային իրավունքները՝ ճանաչել նրանց սեփականության իրավունքը 0.05 հա տնամերձ հողամասի, հողամասին կից 0.0102 հա հողատարածքի և տնամերձ հողամասի վրա կառուցած 269.58 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տան, շինությունների նկատմամբ: Սեփականության իրավունքը ճանաչել համաձայն հողամասի և շինությունների հատակագծերի՝ տրված 2013 թվականի նոյեմբերի 25-ին <<էրգիր.. ԲԲԸ կողմից ըստ որակավորման թիվ 069 վկայականի: Վերականգնումը կատարվում է անհատույց սեփականության իրավունքով:
2. 04-094-059-0019 կադաստրային համարով բնակելի տանը և հողատարածքին տրամադրվել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, Բարեկամության փողոց թիվ 2:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից՝
4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի՝ Մ.Քեյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ
2014թ. մայիսի ……
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2014թվականի N 22-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համասեփականատեր Գրետա Արմենակի Աղաբաբյանի 2014 թվականի մայիսի 27 -ի դիմումը. *որոշում է՝*

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Վարգևան, Գրետա,Անուշ, Նարինե, Նարեկ Աղաբաբյաններին սեփականության իրավունքով պատկանող 0.085 հա հողամասին և 182.9 քմ մակերեսով շինություններին՝ համաձայն <<Մանուկյան Աստղիկ>> ԱՁ -ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի, տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Բաղրամյան փողոց թիվ 17:

2. Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Վարգևան, Գրետա,Անուշ, Նարինե, Նարեկ Աղաբաբյան ներին սեփականության իրավունքով պատկանող 0.0600 հա հողամասին և 43.8 քմ մակերեսով շինություններին՝ համաձայն <<Մանուկյան Աստղիկ>> ԱՁ -ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի, տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Բաղրամյան փողոց թիվ 17/1:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից՝

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 14 թ. _հունիսի _____
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒՆԻՍԻ 2014թվականի N 23 -Ա

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքանակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 2014 թվականի մայիսի 21-ի թիվ 01/12/1688-14 գրությունը և Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի պետ Սարիբեկ Օհանյանի համաձայնությունը. որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի պետ Սարիբեկ Օհանյանին նշանակել անչափահաս Ժորա Ծերունի Խաչատրյանի հասարակական դաստիարակ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014 թ. _____ ____
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2014թվականի N 24-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 30.07.1998 թվականի N 479 որոշման 3-րդկետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2014 թվականի հունիսի 3-ի թիվ 01/04/1834-14 գրությունը, Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարության համաձայնությունը, Արտաշես Գրիգորյանի 2014 թվականի մայիսի 5- դիմումը, հաշվի առնելով հարևան հողօգտագործողների գրավոր համաձայնությունը . ո ր ո շ ու մ եմ՝

1.Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի Դեմիրճյան թաղամասի 4-րդ փողոցի թիվ 5 հասցեում գտնվող 04-098-0169-0011 կադաստրային համարով Արտաշես Վրեժի Գրիգորյանի սեփականությունը հանդիսացող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 2732852, տրված 05 ապրիլի 2011թ.) 0.2212 հա տնամերձ հողամասի գործառական նշանակությունը փոխել որպես հասարակական կառուցապատման հող, հանելով բնակելի կառուցապատման հողերի հաշվեկշռից և ընդգրկել հասարակական կառուցապատման հողերի հաշվեկշռում:
2.Սույն որշման առաջին կետի հիման վրա, նույն հողամասի վրա առկա բնակելի տան /1855.3 քմ ներքին և 2088.2 քմ արտաքին մակերեսով/ գործառական նշանակությունը փոխել, հասարակական նշանակության, որպես մեծածախ առևտրի օբյեկտ /պահեստային և գրասենյակային տարածքներով / շահագործելու նպատակով, հանելով բնակելի ֆոնդի հաշվեկշռից և ընդգրկել հասարակական շինությունների հաշվեկշռում:
3. Շինության և հողամասի հասցեն թողնել անփոփոխ. Արմավիր մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով Դեմիրճյան թաղամասի 4-րդ փողոց թիվ 5:
4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից:
5 . Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 __ թ. _____ ____
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2014թվականի N 25-Ա

ՆՈՅԵՄԶԱՐ ՎԱԶԳԵՆԻ ՍԵԴՐԱԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔԱՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ, Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ճարտարագետի 2014 թվականի հունիսի 10-ին տրված բնակելի տան տեխնիկական վիճակի վերաբերյալ դրական եզրակացությունը և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք ,հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Կարեն Մաչանյանի կողմից 2014 թվականի մայիսի 8-ին տրված շինությունների բնութագիրը, հողամասի հատակագիծը և Նոյեմզար Վազգենի Սեդրակյանի 2014 թվականի հունիսի 6-ի դիմումը. ***որոշում եմ***՝

1. Նոյեմզար Վազգենի Սեդրակյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող 04-094-0142-0019 կադաստրային համարով 0.0398 հա տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցած 35.7 քմ արտաքին մակերեսներով շինությունը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման վճարը բնակելի տան համար 1 քմ՝ 2600 դրամ, կազմում է 35.7 x 2600 = 92820 դրամ (իննսուներկու հազար ութ հարյուր քսան) դրամ:
3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4.Տնամերձ հողամասի և բնակելի տան հասցեն թողնել անփոփոխ. Արմավիրի մարզ գյուղ Փարաքար, Հ.Պարոնյան փողոց տուն 29/1:
5. Սույն որոշումից բխող գույքայինիրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից:
6. Սույն որոշումնուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 14 թ. _____ ____
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

 այաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2014թվականի N 26-Ա

<<ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի մարտի 28-ի ,,Փարաքարի գյուղական համայնքի (բնակավայրի) պարզեցված հատակագիծը հաստատելու մասին,, N 15-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ,,Ֆրանս-հայկական զարգացման,, հիմնադրամի տնօրեն Տիգրան Ռաֆյանի 2014 թվականի դիմումը և սահմանված կարգով վճարված հողի կադաստրային արժեքների տարբերություն վճարման կտրոնը. ո ր ո շ ու մ եմ՝

1. ,,Ֆրանս-հայկական զարգացման,, հիմնադրամին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0307-0021 կադաստրային համարով 0.4084 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասից՝ 3-րդ կարգի վարելահողից 0.04 հա փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա, որպես բնակելի կառուցապատման հող՝ հանգստի տուն կառուցելու համար:

2.Սույն որոշումից ծագող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային ստորաբաժանման կողմից:

3. Հողամասին տալ հասցե. գյուղ Փարաքար, Մոնթե Մելքոնյանի փողոց թիվ 28/1:

4. Հետագա կառուցապատումն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի հիմա վրա Փարաքարի գյուղական համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության համաձայն:

5.Հողամասը երեք տարվա ընթացքում չկառուցապատելու դեպքում սույն որոշումը ճանաչել անվավեր:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014 թ. _____ _____
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆԻՍԻ 2014թվականի N 28-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համասեփականատեր Արտավազդ Սարգսի Գասպարյանի 2014 թվականի հունիսի 16-ի դիմումը. *որոշում եմ՝*

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Քիշմիշ Լևոնի Գասպարյանին, Արամայիս Սարգսի Գասպարյանին և Արտավազդ Սարգսի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող 0.056 հա հողամասին և 157.1 քմ մակերեսով շինություններին՝ համաձայն <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի, տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Կոմունայի փողոց տուն 28:

2. Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Քիշմիշ Լևոնի Գասպարյանին, Արամայիս Սարգսի Գասպարյանին և Արտավազդ Սարգսի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող 0.056 հա հողամասին և 140.2 քմ մակերեսով շինություններին՝ համաձայն <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի, տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Կոմունայի փողոց տուն 28/1:

3.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից՝

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 14թ. _____ ____
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆԻՍԻ 2014թվականի N 27-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 30-ի N 479 որոշման 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2014 թվականի հունիսի 11-ի թիվ 01/04.2/1970-14 գրությունը, Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարության համաձայնությունը, Վաղինակ Ալբերտի Ղազարյանի 2014 թվականի հունիսի 16-ի դիմումը, . ո ր ո շ ու մ եմ՝

1.Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Գ.Չաուշի փողոցի թիվ 1/1 հասցեում գտնվող 04-094-0038-0008 կադաստրային համարով Վաղինակ Ալբերտի Ղազարյանի սեփականությունը հանդիսացող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցմանով վկայական թիվ 19022014-04-0039 տրված 19 փետրվարի 2014թ.) 0.07 հա տնամերձ հողամասի գործառական նշանակությունը փոխել որպես հասարակական կառուցապատման հող՝ առևտրի և սպասարկման օբյեկտ կառուցելու համար:
2. Տնամերձ հողամասը հանելով բնակելի կառուցապատման հողերի հաշվեկշռից և ընդգրկել հասարակական կառուցապատման հողերի հաշվեկշռում:
3. Հետագա կառուցապատումն իրականացնել համապատասխան ճարտարապետահատակագծային առաջադրանքի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:
4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից:
5 . Սույն որոշումն ուժի մեջէ մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 14թ. _հունիսի __ ____
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒՆԻՍԻ 2014 թվականի N 29-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համասեփականատեր Հայկ Սուքիասյանի 2014 թվականի հունիսի 20-ի դիմումը. *որոշում եմ՝*

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Սվետիկ Կարապետյանին և Հայկ Սուքիասյանին սեփականության իրավունքով պատկանող 0.063 հա տնամերձ հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Խորենացու փողոց թիվ 16 :

2.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014 թ. _____ ___
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

05 ՀՈՒՆԻՍԻ 2014թվականի N 21 -Ա

ՄԱՐԳՈ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ, 169-րդ հոդվածներով, Փարաքարի գյուղական համայնքի ղեկավարի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 68-Ա կարգադրությամբ և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ղեկավարի 2014 թվականի փետրվարի 21-ի թիվ 7-Ա կարգադրությամբ հաստատված ժամանակացույցը. կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Մարգո Մարգարյանին 2014 թվականի հունիսի 9 -ից տրամադրել 2013 թվականի աշխատանքային տարվա իր չօգտագործած արձակուրդի մնացած մասը՝ 14 աշխատանքային օր:

2. Մարգո Մարգարյանին աշխատանքի մեջ համարել 2014 թվականի հունիսի 27- ից:

3. Մարգո Մարգարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրա պարտականությունների կատարումը վերապահել Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ Ժորա Հարությունյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014թ. _____ ____
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

06 ՀՈՒՆԻՍԻ 2014թվականի N 22-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 9-րդ և 10-րդ կետով և հիմք ընդունելով ,,Բարեկարգում,, տնօրինության տնօրեն Արտակ Մկրտումյանի 2014 թվականի հունիսի 5-ի զեկուցագիրը՝ կոյուղագծի վթարները վերանորոգելու նպատակով. կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով և հաստատել կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ (Ս.Օհանյանի) երեք աշխատանքային օրյա ժամկետում ուսումնասիրել և կազմել Փարաքար համայնքում վնասված կոյուղագծի վերանորոգման համար պահանջվող շինանյութերի ցանկը, իրականացվող աշխատանքների տեսակը և ներկայացնել հաստատման:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014թ. _____ ____
գ.Փարաքար

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի

Փարաքարի գյուղական համայնքի ղեկավարի

2014 թվականի հունիսի 6- ի

թիվ 22 -Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Նախագահ - Սարիբեկ Օհանյան – Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի պետ

Անդամներ - Արտակ Մկրտումյան - ,,Բարեկարգում,, տնօրինության տնօրեն

Վաղարշակ Միրզոյան - ,,Բարեկարգում,, տնօրինության ճարտարագետ

Վահան Մարգարյան - գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ,ճարտարապետ

Արամ Սարգսյան - գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնիառաջին կարգի մասնագետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ. ՔԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

17 ՀՈՒՆԻՍԻ 2014թվականի N 24-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 10-րդ կետով և հիմք ընդունելով Փարաքար գյուղի Բարեկամության փողոցի բնակիչների 2014 թվականի հունիսի 16-ի դիմումը՝ խմելու ջրի անկայուն մատակարարման և ,,Շաղլու,, ջրանցքի հակասանիտարական վիճակի վերաբերյալ. կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով և հաստատել կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ (Ս.Օհանյանի) հինգ աշխատանքային օրյա ժամկետում ուսումնասիրել և կազմել Փարաքար համայնքի Բարեկամության փողոցի փաստացի ջրամատակարարման գրաֆիկը, ճշտել <<Շաղլու>> ջրանցքի հակասանիտարական վիճակի, հարակից կառուցված անասնաշենքերի առկայությունը և տվյալները ներկայացնել համայնքի ղեկավարին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014թ. _____ ____
գ.Փարաքար

Հավելված

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի

Փարաքարի գյուղական համայնքի ղեկավարի

2014 թվականի հունիսի 17- ի

թիվ 24 -Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Նախագահ - Սարիբեկ Օհանյան – Փարաքարի գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի պետ

Տեղակալ - Արտակ Մկրտումյան - ,,Բարեկարգում,, տնօրինության տնօրեն

Անդամներ- Վահան Մարգարյան - գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ,ճարտարապետ

Արամ Սարգսյան - գյուղապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի առաջին կարգի մասնագետ

Սամվել Ղազարյան - Փարաքարի գյուղական համայնքի ավագանու անդամ

Ալբերտ Դավթյան - Փարաքար գյուղի Բարեկամության փողոցի բնակիչ

Երվանդ Ղուկասյան - Փարաքար գյուղի Բարեկամության փողոցի բնակիչ

Աշխատակազմի քարտուղար՝ Մ, Քեյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

26 ՀՈՒՆԻՍԻ 2014 թվականի N 25-Ա

ԱԼՄԱՍՏ ՍՎԱՋՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ,164-րդ և 169-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1599-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ղեկավարի 2014 թվականի փետրվարի 21-ի թիվ 7-Ա կարգադրությամբ հաստատված ժամանակացույցը. կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետոթյան Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ,,Հովիկ Էդգարյանի անվան արվեստի դպրոց,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ալմաստ Սվաջյանին 2014 թվականի հուլիսի 1-ից տրամադրել 2014 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդը 30 աշխատանքային օր (24 նվազագույն + 6 լրացուցիչ) տևողությամբ:

2.Աշխատանքի մեջ համարել 2014 թվականի օգոստոսի 6 -ից:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014թ. _հունիսի __ ___
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar@rambler.ru

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

27 ՀՈՒՆԻՍԻ 2014թվականի N 26-Ա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 164-րդ և 169-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ղեկավարի 2014 թվականի փետրվարի 21-ի թիվ 7-Ա կարգադրությամբ հաստատված ժամանակացույցը. կարգադրում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ,,Փարաքարի բժշկական ամբուլատորիա,, փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Նարինե Գրիգորյանին 2014 թվականի հուլիսի 1 - ից տրամադրել 2014 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝20 աշխատանքային օր տևողությամբ:
2. Նարինե Գրիգորյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում բժշկական ամբուլատորիայի տնօրենի պարտականությունները վերապահել ընտանեկան բժիշկ Ջեմմա Ավետիսյանին:
3. Նարինե Գրիգորյանին աշխատանքի մեջ համարել 2014 թվականի հուլիսի 30 -ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2014թ. _հունիսի _ ___
գ.Փարաքար